էին սովորաբար հարուստների որդիքը եւ նրանց ծնողները մի նշանակեալ նոէր էին տալիս եկեղեցուն: Իսկ այն տօնին վարժապետը իր աշակերտների յառաջադիմութիւնը ժողովրդին ցոյց տալու համար, պահանջում էր, որ այդ գիրքը կարդային անգիր: Բայց հարուստների որդիների մէջ որտեղի՞ց էր այնքան ընդունակութիւն, որ կարողանային ամբողջ «դանիէլին» անգիր պատրաստել: Մեծ պասի սկզբից նրանք ամէն օր սերտում էին ու սերտում, բայց հէնց որ մօտեցաւ զատիկը, վարժապետը որից որ հարցրեց, չկարողացաւ կարդալ: Էլ ուրիշ ճար չկար. վարժապետը ստիպուած, ինձ յանձնեց պատրաստել «դանիէլին»: Այն օրը մեծ պասի վերջին աւագ ուրբաթ օրն էր – Յիսուս Քրիստոսի խաչելութեան եւ չարչարանքի օրը... մի այնքան չարչարանք պէտք էր՝ մի օրոայ մէջ «դանիէլին» պատրաստելու համար: Աւագ շաբթի կէսօրին վարժապետը հարցրեց, ես կարողացայ կարդալ երեք քառորդ մասը միայն: Գուցէ մինչեւ երեկոյեան պատարագի սկսելը ես կարող կը լինէի մնացածն էլ սերտել, բայց նա համբերել չկարողացաւ, սաստիկ բարկացաւ եւ նախատեց ինձ ամենակեղտոտ հայհոյանքներով: Ես էլ համբերել չկարողացայ, պատասխանեցի նրան մի քանի կոպտութիւններով: — «սատանայի լակոտ, ես քո հէրը կանիծեմ»... գոռաց նա կատաղելով, եւ որովհետեւ աւելի ժամանակ չունէր, բանտարկեց ինձ ախոռատան մէջ եւ հրամայեց այնտեղ փակուած պահել, մինչեւ ինքը ճրագալոյցի երեկոյեան պատարագը կը վերջացնէր եւ եկեղեցուց վերադառնալով, իմ հոգին կառներ...

Ոչինչ ինձ այնքան չէր տանջում, որքան այն զգացմունքը, որ ամբողջ քառասուն օր ծոմ ու պաս էի պահել, առաւօտեան, կէսօրին եւ երեկոյեան ժամ էի գնացել, աղօթք էի արել, իսկ այս գիշեր, որ զատկի ճրագալոյցի գիշերն էր, նոյնպէս պիտի եկեղեցի գնայի, պատարագ տեսնէի եւ «սուրբ-սուրբ-ը» երգելու ժամանակ՝ պէտք է մօրս տուած կարմիր ձուն տաճարին ցոյց տայի ու այնուհետեւ պասս բաց անէի. — այս բոլոր ջերմեռանդ ցանկութիւններս անկատար մնացին, բոլորից զրկուեցա... Կրօնական զգացմունքը վառ էր իմ մէջ, իմ հոգին լի էր ջերմ հաւատքով: Եկեղեցու ամէն մի ծէսը, ամէն մի արարողութիւնը, ամէն մի պաշտամունքը ինձ համար սրբազան նշանակութիւն ունէր, եւ այս պատճառով մեծ ցաւ էի զգում, որ այն օր զուրկ մնացի եկեղեցուց: Միւս կողմից, ինձ տանջում էր մի սարսափելի նախանձ. ես մեր դպրոցի առաջին աշակերտն էի, իսկ ինձանից հարիւր անգամ ստոր ընկերներս այն գիշեր պէտք է եկեղեցում «փոխ» ասէին, «գիրք» կարդային, շարականներ երգէին եւ իրանց ծնողներին ուրախացնէին, — իսկ իմ խեղճ մայրը պէտք է իր որդու ձայնը չլսէր... Այս բոլոր մտածութիւններն այն աստիճան